

նելին Մա[ղ]խազ Խորէն⁴, հանդերձ երանելեան Թաթաւ, տեառն Վանան-դայ, եւ սուրբ արամբն Ներսեհի Քաջբերունոյ եւ այլ աւագ նախարարաւքն. եւ ընդ ահեկէն կողմանէ պատրաստէր զինքն իրով գնդովն եւ իշխանան Առաւելենից Փափագաւ եւ այլ իշխան նախարարաւքն Հայոց. քանզի յայն կողմանէ առաւելապէս երեւէր ղակիշ գնդին Սիւնի զաւրուն եւ այլ զաւրատր արանց նշանք դրաշիցն: Եւ զՀամազասպեան զիւր եղբայրն թողոյր վերջապահ եւ պատուիրէր նմա՝ մի՛ զորք բռնադատել, այլ յորդորել միայն բանիւք՝ յաղագս իւրեանց փրկութեան:

Եւ այսպէս բաժանեալ յերիս առաջս զգաւրսն Հայոց սրբոյն Վարդանայ, եւ **արինեալք ի բերանոյ սուրբ քահանայիցն**, արինաբանելով զԱստուած՝ **յարձակէին ի վերայ միմեանց երկոքին կողմանքն**, Հայոց եւ Պարսից: Եւ ելելս արարեալ այնուհետեւ՝ յառաջէին արք ցանկացաւորք մարտիրոսութեան պսակին, **եւ զգաւրսն Պարսից ի փախուստ դարձուցանէին զառաջինն**: Իսկ այլ բազմութիւն զաւրացն Հայոց, որք առ հարկի եւ ոչ կամաւ, մանաւանդ զի եւ զայլս յերկուանալոյ եւ դարձուցանելոյ յետս, որք երկնից բարութեանց ցանկացեալք էին՝ անդէն ի փախուստ դարձեալ կորնչէին զյաւիտենից կորուստն: Եւ տեսեալ զաւրացն Պարսից զգունդն Հայոց լքեալս եւ պարտասեալս առ ի կոտորել զազգն իւրեանց, հայեցեալ եւ յայն եւս, զի փախուցեալ երթալին զաւրքն Հայոց, ի մէջ առեալ շուրջ գնդաւք՝ պատեալ ծովանային. ուր եւ ցանկալի խնդրոյն դիպեալք՝ կատարէին այնոքիկ: Ստիպով այնուհետեւ զհետ փախստէիցն Հայոց անցանէին զաւրքն Պարսից. որոց հասեալ՝ զոմանս կոտորէին, եւ զայլ ոմանս արգելեալ ի տեղի ինչ ամրոց արգելուին. որոց ոմանք հատեալ զնիզակափակ գիշերոյն պահապանացն եւ զբազումս ի նոցանէ կոտորեալ՝ գնացին ողջանդամք: Եւ այգոյն ի փախստէիցն Հայոց ձերբակալ արարեալ՝ ածին ի բանակն եւ կոտորեցին սրով, եւ զայլս բազումս արկեալ՝ զփղաւք սպանանէին. եւ մնացորդք փախստէիցն յայլ եւ այլ տեղիս Հայաստան աշխարհիս ցրուեցան: Բայց որ ի ժամուն երանելի եւ երկնաւոր կոչմանն եղեն արժանաւորք ընդ սրբոյն Վարդանայ եւ նահատակեցան՝ են այսոքիկ... [տրուած են նոյն՝ Եղիշէի թուարկած նախարարական անունները] **եւ որպէս շատ խուզիւ եւ բազում քննութեամբ հարցեալ եւ ուսաք զնահատակելոցն թիւս**, որք ի տեղոջ պատերազմին պսակեցան ընդ աւագ նախարարսն՝ երկերիւր եւաթանասուն եւ վեց այր: Եւ զորս յամրոցացն իջուցեալ սպանին սրով եւ կամ փղաւք կոխեցին՝ եւաթն հարիւր եւ յիսուն այր. որք լինին միահամուռ **հազար երեսուն եւ վեց այր...** Իսկ ի զաւրացն Պարսիցն, որք անկան ի

⁴ Խորէն Խորխոռունու եւ ստորեւ Ներսեհ Քաջբերունու մասին Փարպեցու այս տուեալները ճիշտ չեն. իրականում նրանք եղել են Հայոց զօրքի **ծախ** թետում եւ զոհուել այնտեղ՝ ի տարբերութիւն միւս երկու թետերի հրամանատարների: